

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

### <<ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՃԱՐԿՈՂ ԲՆԱԿԱՀԱՆԱԿԱՆ ԿՃԱՐՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** <<Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 15-ի ՀՕ-188 օրենքի /այսուհետ՝ Օրենք/ վերնագրում և ամբողջ տեքստում <<բնապահպանական վճարներ>> բառերը և դրանց համապատասխան հոլովածները փոխարինել <<բնապահպանական հարկեր>> բառերով և համապատասխան հոլովածներով:

**Հոդված 2.** Օրենքի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<<Ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկերից մասհանումներ կատարվում և առանձին տողով արտացոլվում են այն համայնքների բյուջեներում, որոնց տարածքում նշված ընկերությունների գործունեությունը շրջակա միջավայրի վրա թողնում է վնասակար ազդեցություն: Ընկերությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Համայնքների ցանկը և բնապահպանական հարկերից նրանց վարչական և ֆոնդային բյուջեներ մասհանվող գումարների չափերը յուրաքանչյուր տարվա համար հաստատվում են տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով: Մասհանումները տվյալ (այսուհետ՝ առաջիկա) բյուջետային տարվա ընթացքում կատարվում են անմիջապես պետական բյուջեից՝ սուբվենցիայի տեսքով սույն օրենքի 3-րդ հոդվածում նշված նախապայմանների կատարման դեպքում:

Մասհանումների չափը որոշվում է առաջիկա բյուջետային տարվան նախորդող երկրորդ տարվա արդյունքներով պետական բյուջե փաստացի վճարված բնապահպանական հարկերի հանրագումարի չափով:

Սույն օրենքի համաձայն՝ մասհանումներ կատարվում են ամրակայված աղբյուրներից մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետելու, ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացություններ արտանետելու ու հատուկ հատկացված տեղերում ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնների տեղադրելու կամ պահելու համար սահմանված բնապահպանական հարկերից:

Միևնույն ընկերության գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող մեկից ավելի համայնքների միջև սույն օրենքով սահմանված

մասհանումների գումարների բաշխման համամասնությունների հաշվարկման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:>>:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթի, որն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համայնքների տարածքում իրենց գործունեությամբ վնասակար ազդեցություն թողնող ընկերությունների ցանկը սահմանելուց հետո և 3-րդ ու 4-րդ մասերով սահմանված դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում 2020 թվականի հունվարի 1-ից: